Պատգամներու այս Թարգմանութիւնը աւելի տառացի է քան գրական

ՍՈՒՐԲ ԿՈՅՍԻ ԵՒ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ ՍՈՒՖՖԱՆԻԷԻ ՄԻՐՆԱ ՆԱՋՋՈՒՐԻ, ԴԱՄԱՍԿՈՍ, ՍՈՒՐԻԱ:

Սուրբ Կոյսին առաջին երեւումը,
Չորեքշաբթի 15 Դեկտեմբեր 1982ին :

Նկատի ունենալով Միրնայի վարհուրած վիճակը, առաջին պատգամը տրուած է երկրորդ երեւումին (1)

Սուրբ Կոյսին Երկրորդ երեւումը, առաջին պատգամ.
Շաբաթ 18 Դեկտեմբեր 1982 ժամը գիշերուայ 11.37ին

Յիշեցէք զԱստուած,
Որովհետեւ Աստուած մեզի հետ է:
Դուք ամէն բան գիտէք եւ բան մը՛ն ալ չէք գիտեր.
Ձեր իմացումը անկատար իմացում է
Սակայն պիտի գայ օրը ուր պիտի գիտնաք ամէն բան, ինչպէս որ Աստուած Ձիս կը ճանչնայ:
Բարիք ըրէք չարիք ընողներուն
Եւ մէկու մը մի վնասէք
Ձեզի տուի ձեր ուզածէն աւելի իւղ
Եւ ձեզի պիտի տամ իւղէն աւելի կօրաւոր բան մը (2):
Զղջացէք եւ հաւատացէք, եւ յիշեցէք Ձիս ձեր ուրախութեան մէջ:
Աւետեցէք Իմ որդիս, Էմմանուէլը
Այն որ վինքը կ՛աւետէ փրկուած է, եւ այն որ վինք չ՛աւետէր, անոր հաւատքը ունայն է:
Ձիրար սիրեցէք:
Ձեմ խնդրեր որ դրամ տաք եկեղեցիներուն, ոչ ալ դրամ բաժնեք աղքատներուն:
Կ՛ուզեմ սէրը:
Անոնք որ դրամնին եկեղեցիներուն կու տան կամ աղքատներուն կը բաժնեն
Առանց սիրոյ
Անոնք ոչինչ են:
Տուները աւելի պիտի այցելեմ
Որովհետեւ անոնք որ եկեղեցի կ՛երթան երբեմն հոն չեն երթար աղօթելու համար (3):
Ձեմ ուզեր որ Ինծի եկեղեցի մը կառուցանէք այլ ուիստատեղի մը (4);
Տուէք:
Ոչ մէկուն ալացէք խնդրուած օգնութիւնը :

Սուրբ Կոյսին Երրորդ երևումը, երկրորդ պատգամ.
Շաբաթ 8 Յունուար 1983 ժամը գիշերուայ 11.37ին

Սուրբ Կոյսը կ՛ուլար:
Ան ըսաւ Միրնայի . վնաս չունի:
Միրնա եւս կ՛ուլար բացաքանչելով .
"Սուրբ Կոոյսը կ՛ուլայ":
Վերջապէս, Սուրբ Կոյսը կը հեռանայ, բայց անհետանալէ առաջ, մեղմ ժպիտ մը ունի Ան :

Սուրբ Կոյսին Չորրորդ երևումը, երրորդ պատգամ.
Ուրբաթ 21 Փետրուար 1983 ժամը գիշերուայ 9.30ին :

Զաւակներս,
Խօսքը մեր մէջ, Ես դարձեալ հոս վերադարձայ:
Մի նախատէք հպարտները որոնք հեղութիւն չունին :
Հեղը ծարաւ է ուրիշներուն ակնարկութեանց որպէսզի իր թերութիւնները սրբագրէ:
Մինչդեռ ապականած հպարտը կ՛արհամարհէ, իր ապստամբութիւնը թշնամական կը դառնայ:
Ներումը լաւագոյն բանն է:
Այն որ անապակ և ավնիւ կը ձեւանայ մարդոց առջև պիղծ է Աստուծոյ առջև:
Ձեզի խնդրանք մը կը ներկայացնեմ, բառ մը որ պէտք է որ տպաւորէք ձեր յիշողութեան մէջ,
Զոր պէտք է կրկնէք միշտ:
Աստուած պիս կը փրկէ. Յիսուս պիս կը լուսաւորէ. Սուրբ Հոգին իմ կեանքս է. այնուհետեւ բանէ մը չեմ վախնար:
Անանկ չէ,Յովսէբ Որդիս՞
Հանդուրժեցէք և ներեցէք:
Ձեր հանդուրժանքը Հօր հանդուրժաքէն շատ աւելի քիչ է:

Սուրբ Կոյսի Հինգերորդ երևումը, չորրորդ պատգամ.
Հինգշաբթի 24 Մարտ 1983 ժամը գիշերուայ 9.30ին (5);

Զաւակներս,
Իմ պատգամաւորութիւնս վերջացած է:
Այդ գիշերը Հրեշտակը Ինծի ըսաւ.
"Օրհնեալ ես դու ի կանայս"
Եւ Ես միայն կրցայ պատասխանել. "Ահաւասիկ Տիրոջ աղախինը":
Ուրախ եմ,
Ես արժանի չեմ ձեզի ըսելու.
"Ձեր մեղքերը ներուած են", բայց Աստուածս այդ ըսաւ:
Աստուած ըսաւ:
Հիմնեցէք եկեղեցի մը:
Ես չըսի. "Շինեցէք եկեղեցի մը":
Այն Եկեղեցին զոր Յիսուս հիմնեց Մէկ Եկեղեցի է, որովհետեւ Յիսուս Մէկ է
Եկեղեցին Երկնքի Արքայութիւնն է երկրի վրայ:
Այն որ զայն բաժնած է մեղանչած է, և այն որ կ՛ուրախանայ անոր բաժանումէն մեղանչած է:
Յիսուս զայն հիմնեց, պզտիկ էր ան,

Եւ երբ որ մեծցաւ,
Բաժնուեցաւ:
Եւ այն որ վայն բաժնեց չունի սէր իր մէջ:
Հաւաքեցէք:
Ձեպի կ՚ըսեմ, աղօթեցէք, աղօթեցէք և աղօթեցէք:
Ինչ գեղեցիկ են վաւակներըս ծունկի եկած կ՚աղերսէն,
Մի վախնաք, Ես ձեպի հետ եմ:
Մի բաժնուիք մեծերուն պէս,
Դուք
Պիտի սորվեցնէք սերունդներուն միութեան, սիրոյ և հաւատքի ԲԱՌԸ:
Աղօթեցէք երկրի և երկնքի բնակիչներուն համար:

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ ՍԲԱՆՉԱՆՔՆԵՐՈՒ
ՀՈԿՏԵՄԲԵՐ 28 1983ԷՆ
ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲԵՐ 26 1985ԻՆ

Պատգամ Սուրբ Կոյսէն
Ուրբաթ Հոկտեմբեր 28 1983ին

Մի Վախնար, այս ամէնը կը պատահին որպէսզի Աստուծոյ անունը փառաւորուի:
Մի վախնար, քեզմով պիտի դաստիարակեմ Իմ սերունդս:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Ուրբաթ Նոյեմբեր 4 1983 ին

Իջիր և իրենց ըսէ թէ Իմ աղջիկս ես իրենցը ըլլալէ առաջ...
Սիրտը հիւծեցաւ միածին Տղուս վրայ:
Ձպիտի հիւծուի բոլոր Իմ վաւակներուս վրայ:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Ուրբաթ Նոյեմբեր 25 1983ին

Միայն այս կ՚ուզեմ:
Ես չեկայ բաժնելու համար:
Ամուսնական կեանքդ պիտի չի փոխուի:
Պիտի ուզէիր Իմ տունս գալ՞
...Եկուր... Կը բաւէ որ ուզես գալ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Հինգշաբթի Մայիս 31 1984 ին,
Համբարձման օր

Աղջիկս,
Ես եմ Սկիզբը և Վերջը:
Ես եմ Շնարտութիւնը, Ապատութիւնը և Խաղաղութիւնը:
Ցեկի կ՛ուտամ Իմ խաղաղութիւնս:
Քու խաղաղութիւնդ չկենայ մարդոց լեզուին վրայ,
Բարի թէ զէշ,
Եւ քու մասիդ յոռի մտածէ:
Որովհետեւ այն որ ուրիշներուն հաւանութիւնը միայն կը փնտռէ, եւ չի վախնար անոնց անհա-մաձոյնութենէն, կը վայելէ իսկական խաղաղութիւնը:
Եւ այդ կ՛իրագործուի Ինձմով:
Ապրիր կեանքդ, խաղաղ և անկախ:
Թող Ինձի համար կրած յոգնութիւններդ քեզ չցաւցնէն:
Ուրախացիր:
Ես կարող եմ քեզ վարձատրել, որովհետեւ յոգնութիւններդ չպիտի երկարին և ցաւերդ պիտի դադրին:
Յաւիտենական կեանքին արժանանալու համար կ՛արժէ որ պաշտամունքով աղօթես:
Աղօթէ որ Աստուծոյ կամքը ըլլայ և ըսէ.

Միրելի Յիսուս,
Շնորհէ որ Քեզի ապաւինիմ,
Ամէնէ աւելի,
Ամէն արարածէ առաջ
Ամէն Հրեշտակներէդ աւելի,
Ամէն գովասանքէ աւելի,
Ամէն ուրախութենէ աւելի,
Ամէն փառքէ և յարգէ աւելի
Բոլոր երկնային բանակէ աւելի,
Որովհետեւ միայն Դուն ես Ամէնաբարձրը,
Միայն Դուն Զօրաւոր և Բարի ես ամէնէն աւելի,
Եկուր ինձի և պիս մխիթարէ
Եւ շղթաներս քակէ,
Եւ ազատութիւն տուր ինձի
Որովհիտեւ առանց Քեզի իմ ուրախութիւնս անկատար է,
Առանց Քեզի սեղանս պարապ է:

Այն ատեն Ես պիտի գամ ըսելու համար. "Ահաւասիկ Եկայ, որովհետեւ Զիս հրաւիրեցիր":

Պատգամ Սուրբ Կոյսէն
Ուրբաթ Սեպտեմբեր 7 1984ին

Սուրբ Կոյս Մարիամը գաղտնիք մը հաղորդեց Միրնայի.
"Ասիկա մեր մէջ պիտի մնայ մինչեւ մահդ"
Միրնա այս պատգամէն միայն այս բառերը կը յիշէ.
Ապրիր կեանքդ:
Սակայն մի արտօներ որ կեանքը արգիլէ աղօթելը քեզի:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Շաբաթ Մայիսի 1 1985ին

Զաւակներս , հաւաքուեցէք:
Սիրտս վիրաւոր է:
Մի Թողուք որ Սիրտս բաժնուի ձեր բաժանումներուն պատճառաւ:
Աղջիկս, քեզի նուէր մը պիտի տամ յոգնութեանդ համար:

Պատգամ Սուրբ Կոյսէն (Հասսաբա, Սուրիա)
Կիրակի Օգոստոս 4 1985ին

Եկեղեցին Երկնքի Արքայութիւնն է երկրի վրայ:
Այն որ Զայն կը բաժնէ մեղանչած է
և այն որ կ՚ուրախանայ անոր բաժնուելուն համար մեղաւոր է:
Ուրախ եմ: Մի վախնար, հետդ Եմ:
Քեզմով պիտի դաստիարակեմ Իմ սերունդս:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Շաբաթի Օգոստոս 14 1985ին

Անունդ կը շնորհաւորեմ:
Իմ տօնս է երբ ձեզ միացած կը տեսնեմ:
Ձեր աղօթքը Իմ տօնս է:
Ձեր հաւատքը Իմ տօնս է:
Ձեր սրտերուն միութիւնը Իմ տօնս է:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Շաբաթ Սեպտեմբեր 7 1985ին,

Ես Արարիչն եմ:
Զայն ստեղծեցի որպէսզի Ան Զիս ստեղծէ:
Ուրախացէք երկնքի բերկրանքին համար,
Ինչու որ Հօր Դուստրը և Աստուծոյ Մայրը,
Եւ Հոգին Սուրբի Հարսը ծնաւ:
Հրճուեցէք երկրի հրճուանքով, որովհետեւ ձեր փրկութիւնը իրականացաւ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Երեքշաբթի Նոյեմբեր 26 1985ին
Երեւոյթին Երրորդ տարեդարձին նախօրեակը

Աղջիկս,
Կ՛ուզես խաչուիլ թէ՞ փառաւորուիլ
Միրնա կը պատասխանէ. Փառաւորուիլ (6)
Յիսուս կը ժպտի և կ՛ըսէ.
Կը նախնտրես փառաւորուիլ արարածով թէ Արարիչէն՞
Միրնա կը պատասխանէ. Արարիչէն
Այն ատեն Յիսուս ըսաւ. Այդ կրնայ ըլլալ խաչելութեամբ,
Ինչու որ ամէն անգամ որ արարածներուն կը նայիս, Արարիչին ակնարկը քեզմէ կը հեռանայ:
Կ՛ուզեմ, աղջիկս,
Որ ջանաս աղօթել և անձդ արհամարհես:
Որովհետեւ այն որ իր անձը կ՛արհամարհէ կը կօրանայ և կը բարձրանայ Աստուծմով:
Ես խաչուեցայ ձեր սիրոյն:
Եւ կ՛ուզեմ որ կամաւորապէս կրէք և տանիք ձեր խաչը Իմ սիրոյս,
Սիրով և համբերութեամբ,
Եւ սպասէք Իմ գալուստս:
Որովհետեւ այն որ կը մասնակցի տառապանքին Ինծի հետ,
Զայն պիտի մասնակի ընեմ փառքին
Եւ Փրկութիւնը միայն Խաչով կ՛ուգայ:
Մի վախնարէ աղջիկս,
Պիտի կարենաս, Իմ չարչարանքներուս միջոցաւ, մեղաւորներուն ներումը իրականցնել:
Այս է ակը ուր ամէն հոգի իր ծարաւը կը հագեցնէ:
Եւ եթէ Իմ բացակայութիւնս երկար տեւէ և լոյսը խաւարի քեզ համար, մի վախնար, Իմ փառքիս համար պիտի ըլլայ:
Գնա՛ երկրի վրայ ուր եղծանումը ըմդհանրացած է, եւ ապրիր Աստուծոյ Խաղաղութիւնով:

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ ՍՔԱՆՉԱՆՔՆԵՐՈՒ
ՆՈՅԵՄԲԵՐ 26 1986ԷՆ
ՄԻՆՉԵՒ ՕԳՈՍՏՈՍ 14 1987

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Շորեքշաբթի Նոյեմբեր 26 1986ին,
Երեւոյթին Շորրորդ տարեդարձին նախօրեակը

Աղջիկս,
Ինչ գեղեցիկ է այս վայրը, հոս պիտի կառուցանեմ Իմ Թագաւորութիւնս և իմ Խաղաղութիւնս:
Ձեզի պիտի տամ Սիրտս, որպէսզի տիրանամ ձեր սրտերուն:
Ձեր մեղքերը ներուած են, որովհետեւ Ինծի կը նայիք:
Եւ Ինծի նայողին դէմքին վրայ Իմ պատկերս պիտի գծեմ:
Որովհետեւ վայ անոր որ Իմ պատկերս կը ներկայացնէ երբ արիւնս ծախած է:
Աղօթեցէք մեղաւորներուն համար:
Որովհետեւ ամէն աղօթքի բառի փոխարէն, Իմ արիւնէս մէկ կաթիլ պիտի թափեմ մեղաւորի մը վրայ:
Աղջիկս, երկրի խնդիրները մի թոյլատրեր որ քեզ յուզեն:
Որովհետեւ Իմ վէրքերովս պիտի շահիս յաւիտենական կեանքը:
Կ՚ուզեմ վերակրկնել իմ չարչարանքներս:
Եւ կ՚ուզեմ որ Իմ առաքելութիւնս կատարես, որովհետեւ կրնաս երկինք մտնել երբ երկրի վրայ ունեցած առաքելութիւնդ կատարես:
Գնա՛ խաղաղութեամբ:
Եւ ըսէ Իմ վաւակներուս որ Ինծի դիմեն միշտ, և ոչ միայն երբ կը կրկնեմ Մօրս Տօնը
Որովհետեւ Ես իրենց հետ եմ միշտ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Շաբաթ Ապրիլ 18 1987ին,
Աւաթ Շաբաթ օրը

Ձեզի տուի նշան մը իմ Փառորութեանս համար:
Շարունակեցէք ձեր ճամբան և Ես ձեզի հետ եմ:
Ապա թէ ոչ...

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Հինգշաբթի Մայիս 28 1987ին,
Համբարձման տօն

Զիրար սիրեցէք և հաւատքով աղօթեցէք:

Պատգամ Յիսուս Քրրիստոսէն (Մաատ, Լիբանան)
Շորեքշաբթի Յուլիս 22 1987ին

Մի վախնար աղջիկս, Քեզմով պիտի դատիարակեմ Իմ սերունդս:
Աղօթեցէք, աղօթեցէք և աղօթեցէք:
Եւ երբ աղօթէք, ըսէք.
Ով Հայր,
Քու Զաւկիդ Վէրքերուն արժանիքներուն
համար, մեզ փրկէ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Ուրբաթ Օգոստոս 14 1987ին

Աղջիկս,
Ան Իմ Մայրս է, որմէ ծնայ:
Ան որ Զայն կը փառաւորէ, Զիս կը փառաւորէ:
Ան որ Զայն կ՚ուրանայ, Զիս կ՚ուրանայ:
Եւ ան որ Անկէ կը խմդրէ կ՚ըստանայ, որովհետեւ Ան Իմ Մայրս է:

ՍՔԱՆՉԱՆՔՆԵՐԸ
ԿԸ ՀԱՄՆԻՆ ԴԱՐՁՈՒԱԾՔԻ ՄԸ
ՍԵՊՏԵՄԲԵՐ 7 1987ԷՆ
ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲԵՐ 26 1987

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Ուրբաթ Սեպտեմբեր 7 1987ին

Մարիամ (7), չէ՞ որ Ես քեզ ընտրեցի, այն հանդարտ աղջիկը, սիրով և համակրանքով լեցուն
Անդրադարձայ որ անկարող ես որևէ բանի դիմանալ Ինծի համար:
Քեզի առիթը պիտի տամ ընտրելու:
Եւ լաւ գիտցիր որ եթէ Զիս կորսնցնես, պիտի կորսնցնես նաև բոլոր քեզ շրջապատողներուն աղօթքները,
Եւ գիտցիր որ Խաչը կրելէ խուսափում չկայ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Հինգշաբթի Նոյեմբեր 26 1987ին
Երեւոյթին Հինգերորդ տարեդարձին նախօրեակը

Աղջիկս,
Կը գնահատեմ որ Զիս ընտրեցիր, բայց ոչ միայն խօսքով:
Կ՚ուզեմ որ Սիրտս քու փափուկ սրտիդ միացնես որպէսզի մեր սրտերը միանան:
Այս ընելով տառապող հոգիներ պիտի փրկես:
Մէկը մի ատեր որպէսզի սիրտդ չկուրանայ Ինծի համար:
Սիրէ ամէն մարդ ինչպէս որ Զիս սիրեցիր, մանաւանդ անոնք որ քեզ ատեցին և քու մասիդ զէշ խօսեցան: Ինչու որ այս ճամբով փառքին պիտի տիրանաս:
Յարատեւէ կողակիցի, մօր և քրոջ դերիդ մէջ:
Մի մտահոգուիր քեզի պատահելիք դժուարութեանց և ցաւերուն մասին:
Կ՚ուզեմ որ անոնցմով աւելի զօրաւոր ըլլաս, և Ես քեզի հետ եմ, ապա թէ ոչ Իմ սիրտս պիտի կորսնցնես:
Գնա՛ աւետէ բոլոր աշխարհին և առանց վախի թէ կ՚աշխատինք Միութեան համար:
Մարդը չեն մեղադրեր իր ձեռքին գործով այլ իր սրտին գործով:
Իմ խաղաղութիւնս քու սրտիդ մէջ քեզի և քեզի հետ գործակցողներուն համար օրհնութիւն պիտի ըլլայ:

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ ՍՔԱՆՉԱՆՔՆԵՐՈՒ
ՕԳՈՍՏՈՍ 14 1988ԷՆ
ՄԻՆՉԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ 10 1988

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
(Լոս Անճելէս, Միացեալ Նահանգներ)
Կիրակի Օգոստոս 14 1988ին

Զաւակներս,
Ես ձեզի Իմ խաղաղութիւնս տուի, իսկ դուք ինչ տուիք Ինծի:
Դուք Իմ եկեղեցիս էք եւ ձեր սիրտը Ինծի կը պատկանի:
Բացի եթէ այդ սիրտը ունի Ինձմէ ուրիշ աստուած մը:
Ես ըսի. *"Եկեղեցին երկնքի Արքայութիւնն է աշխարհի վրայ":*
Ան որ Զայն բաժնեց մեղանչած է, եւ այն որ ուրախացած է այս բաժանումէն մեղանչած է:
Ուրեմն աւելի դիւրին է Ինծի համար հաւատք տալ անհաւատի մը քան թէ անոնց որ կը ձեւանան հաւատքը և սէրը ունենալ և կ՚երդնուն Իմ անունով:
Միայն Աստուծոյ վրայ պէտք է դնէք ձեր պարծանքը:
Աղօթեցէք մեղաւորներուն համար որ Իմ անունովս կը ներեն և անոնց համար որ Իմ Մայրս կ՚ուրանան:
Զաւակներս, ձեզի Իմ բոլոր ժամանակս տուի, դուք ալ Ինծի տուէք ձեր ժամանակին մէկ մասը:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն (Դամասկոս, Սուրիա)
Շաբաթ Սեպտեմբեր 7 1988ին

Աղջիկս,
Քեզի ըսի յաղթահարէ բոլոր դժուարութիւններուն, և գիտցիր թէ շատ քիչ դժուարութիւններ ունեցար:
Ըսէ Իմ զաւակներուս թէ իրենցմէ է որ կ՚ուզեմ միութիւնը և չեմ ուզեր զայն անոնցմէ որ դեր կը խաղան և կը ձեւացնէն թէ միութեան համար կ՚աշխատին:
Գնա՛ և աւետէ:
Եւ ուր որ ըլլաս, Ես հետդ եմ:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն (Մաատ, Լիբանան)
Երկուշաբթի Հոկտեմբեր 10 1988ին

Աղջիկս Մարիամ,
Ինչու՞ կը վախնաս երբ Ես հետդ եմ:
Բարձր ձայնով պէտք է ըսես իրական խօսքը քեզ Ստեղծողին մասին, որպէսզի Իմ ոյժս երեւի քու մէջդ:
Եւ Ես քեզի պիտի տամ Իմ վէրքերէս որպէսզի մոռնաս մարդոց քեզի տուած ցաւերը:
Ճամբադ մի ընտրեր, որովհետեւ Ես գծեցի զայն:

ՉՈՐՈՐԴ ՇՐՋԱՆ ՍՔԱՆՉԱՆՔՆԵՐՈՒ
ՆՈՅԵՄԲԵՐ 26 1988ԷՆ
ՄԻՆՉԵՒ ՆՈՅԵՄԲԵՐ 26 1990

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Շաբաթ Նոյեմբեր 26 1988ին
Երեւոյթին Վեցերորդ տարեդարձին նախօրեակը

Զաւակներս,
Արդեօք ինչ որ կ՛ընէք Իմ սիրոյս համար կ՛ընէք՞
Մի ըսէք. "Ինչ՞ կ՛ընեմ",
Ինչու որ ասիկայ Իմ գործս է:
Պէտք է ծոմապահութիւն ընէք և աղօթէք,
Որովհետեւ աղօթքով է որ պիտի կարենաք դիմաւորել Իմ ճշմարտութեանս և պիտի դիմագրաւէք բոլոր հարուածները:
Աղօթեցէք անոնց համար որ մոռցան Ինծի ըրած խոստումնին, ինչու որ պիտի ըսէն.
"Ինչու չկգացի Ներկայութիւնդ ով Տէր, երբ ինծի հետ էիր":
Իմ բոլոր ուպածս սա է որ հաւաքուիք բոլորդ Իմ մէջս, իմչպէս որ Ես ձեր ամէն մէկուն մէջն Եմ:
Գալով քեզի, աղջիկս, քեզմէ պիտի հեռանամ:
Մի վախնար եթէ ուշանաս ձայնս լսելէ, կօրաւոր եղիր և լեզուդ թող ըլլայ սուր մը որ կը խօսի Իմ անունովս:
Վստահ եղիր Ես քեզի և ամէնուդ հետ եմ:

Պատգամ Սուրբ Կոյսէն (Լոս Անճելէս, Միացեալ Նահանգներ)
Ուրբաթ Օգոստոս 18 1989ին

Մի վախնար, աղջիկս,
Այս ամէնը կը պատահի որպէսզի Աստուծոյ անունը փառաւորուի:
Աւելի հրճուիր,
Որովհետեւ Աստուած արտօնեց որ Ինծի գաս որպէսզի քեզի ըսեմ.
"Մի մտահոգուիր քու մասիդ ըսուածներուն համար, բայց միշտ խաղաղ եղիր",
Ինչու որ արարածը Ինծի կը նայի քու միջոցաւրդ:
Ամէնուն ըսէ որ աւելի աղօթեն որովհետեւ աղօթքին պէտք ունին Աստուծոյ հաճելի ըլլալու համար:
Աստուծոյ օրհնութիւնը իջնէ քու և, Իր սիրոյն համար, քեզի հետ գործակցողներուն վրայ:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Կիրակի Նոյեմբեր 26 1989ին
Երեւոյթին Եոթերորդ տարեդարձին նախօրեակը

Զաւակներս,
Յիսուս Պետրոսին ըսաւ.
"Դոն քարն ես եւ Ես անոր վրայ պիտի հիմնեմ Իմ Եկեղեցիս"
Եւ հիմա Ես կ՚ըսեմ.
"Դուք էք սիրտը որուն մէջ Յիսուս պիտի հիմնէ Իր Միասնականութիւնը"
Կ՚ուզեմ որ ձեր աղօթքները նուիրէք խաղաղութեան, այժմ և մինչև Յարութեան ոգեկոչումը:

Պատգամ Յիսուս Քրիստոսէն
Շաբաթ Ապրիլ 14 1990ին
Աւագ Շաբաթ օրուայ տօնին

Զաւակներս,
Դուք պիտի սորվեցնէք սերունդներուն միութեան, սիրոյ և հաւատքի ԲԱՌԸ:
Ես ձեզի հետ եմ:
Բայց դուն, աղջիկս,
Իմ ձայնս պիտի լսես միայն երբ Տօնը (Զատկուայ) միասնանայ:

Պատգամ Սուրբ Կոյսէն (Պրաշաաթ, Պելճիգա)
Չորեքշաբթի Օգոստոս 15 1990ին

Զաւակներս,
Աղօթեցէք խաղաղութեան համար, մանաւանդ Արեւելքի մէջ,
Որովհետեւ բոլորդ եղբայր էք Յիսուսին մէջ:

Պատգամ Սուրբ Կոյսէն
Երկուշաբթի Նոյեմբեր 26 1990ին
Երեւոյթին Ութերորդ տարեդարձին նախօրեակը

Մի վախնար, աղջիկս
Եթէ քեզի ըսեմ թէ վերջին անգամն է որ կը տեսնես Զիս, մինչեւ որ Տօնը (Զատկուայ) միասնանայ:
Ուրեմն, ըսէ զաւակներուս,
"Կ՚ուզեն՞ տեսնել և յիշել Իմ Զաւկիս վէրքերը քու մէջդ, այո դէ ոչ"
Եթէ իրենց համար դիւրին է քու երկու անգամ չարչարուիլդ տեսնել, Ես Մայր եմ, և ինծի շատ դժուար է տեսնել Իմ Որդւոյս շատ անգամ տառապիլը:
Հանդարտ եղիր, հանդարտ եղիր աղջիկս:
Եկուր որ Ան քեզի խաղաղութիւն տայ,
Որպէսզի դուն կարենաս զայն տարածել բոլոր մարդոց:
Իւղին գալով, պիտի շարունակէ երեւիլ քու ձեռքերուդ վրայ Իմ Որդւոյս Յիսուսի փառաւորութեան համար, երբ Ան ուզէ և ուր որ երթաս, որովհետեւ Մենք քեզի հետ ենք
Եւ որեւէ մէկուն հետ որ կը մաղթէ որ Տօնը (Զատկուայ) միասնանայ:

Փակագիծի մէջ գրուած բառերը կը ծառայեն յստակացնելու և ամբողջացնելու արաբերէնի թարգմանութիւնը:
Այս յօդուածը Ֆրանսերէնէն թարգմանուած է :

---

(1) Առաջին պատգամը տրուած է երկրորդ երեւումին, որովհետեւ առաջին երեւումին, Միրնա այնքան շփոթած էր որ փախած էր ներոջը Էլէնին տունը, վայն արթնցուցած էր աղակելով եւ տանիքը ցուցնելով ըսած էր. "Էլէն, Էլէն, Սուրբ Կոյսը " ! Էլէն բան մը չէր տեսներ : Առատ՝ Էլէնի ամուսինը եւ Միրնայի տագրը բակուկներուն մէջ վերցնելով վայն իջեցուցած է մինչեւ հիւրասենեակ : Հայր Էլիաս Զահլաուի կը հասնի տեղւոյն վրայ գիշերուայ ժամը 11.15ին աղօթքին վերջաւորութեան: Միրնա շրջապատուած էր իր ծնողաց եւ Յոյն Օրթոտոքս ծէսի պատկանող Հայր Ժօրժ Ապու Զահեմէն : Անոնք իրեն կը պատմեն պատահածը: Այն ատեն Հայր Էլիաս Զահլաուի կ՛ըսէ Միրնայի . "Անկասկած Սուրբ Կոյսը ուզած է քեզի յանձնել պատգամ մը, բայց քեզ այդքան տակնուվրայ վիճակի մէջ գտնելով, չէ կրցած բան մը ըսել: Ապագային պատրաստուիր այս աղօթքով . "Ով Սուրբ Կոյս, օգնէ ինծի քեզ ընդունելու եւ ըսականչալուր ըլլալու Քու պատգամիդ " Այն ատեն Միրնա կ՛աւելցնէ . "Միայն այս՞ " :

(2) Այս նախադասութիւնը կը պատասխանէ Միրնայի հօրը խնդրանքին՝ սքանչանքի պահուն: ("Ով Սուրբ Կոյս, կ՛աղերսեմ. Մեզ մի վրկեր Քու իւղէդ "):

(3) Սուրբ Կոյսին "Աւելի յաճախ պիտի այցելեմ տունները" արտայայտութիւնը անհասկնալի մնացած է մինչեւ այն օրը ուր իւղը ծորած է բակմաթիւ Notre-Dame de Souffaniehի նկարուած սրբանկարներէն : Այս պատահած է Հոկտեմբեր 1983 էն սկսեալ և յաջորդ Նոյեմբեր ամսոյն, Սուրբ Կոյսին Սուֆֆանիէի տան մէջ եւ այլեւայլ տեղեր : Այս նախադասութիւնը ներկայացուց իր բոլոր նշանակութիւնը երբ մարդիկ սկսան աղօթել իրենց տուներուն մէջ, պաշտելով այդ նկարները:

(4) Իսկապէս, Սուրբ Կոյսը ճշդած էր յետագայ սքանչանքի մը ատենը, թէ այս աղօթատեղիին ճակատի դուռին առջեւէն պէտք էր վերցնել քար մը և անոր տեղը վետեղել սրբանկար մը, որուն վերը պէտք էր տեսնուէր շնորհակալական արձանագրութիւն մը ուղղուած Իր Որդւոյն, Յիսուսի: Ինչ որ գործադրուեցաւ 1983ի Մայիս ամսուայ սկիզբը:

(5) Այս տեսիլքին վերջաւորութեան, և իր սովորական վիճակը չգտած, Միրնա ըսաւ. "... Ամենակարող Աստուածը...": Ներկայ գտնուողները շարունակեցին Հաւատամքը... Վերջաւո-րութեան Միրնա աւելցուց: Փառք Աստուծոյ երկնքի մէջ և խաղաղութիւն աշխարհի վրայ բարի կամք ունեցող մարդոց": Երբ ինքզինքին եկաւ իրեն հարցումներ ուղղուեցան իր արտայայտութեան մասին: Ան պատասխանեց. "Սուրբ Կոյսը սկսաւ, ուրեմն ես շարունակեցի իրմէ ետք":

(6) Միրնային հարցուեցաւ բացատրել նշանակութիւնը այս խօսքին. *"Փառք Հօր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ":*

(7) Մարիամ Միրնայի իսկական անունն է:

ԻՒՂԸ

Իւղը նշան է առատութեան, ուրախութեան: Ան կը վտէ, կը կակուղցնէ: Նշան է բժշկումի և սփոփանքի: Կը վօրացնէ և կը ցայտեցնէ լոյսը: Կը ծառայէ Թագաւորներու օծումին: Հոմանիշը և խորհրդանիշն է Հոգին Սուրբին: Միւռոնը որմով օծելը կը ներկայացնէ Հոգին Սուրբին կնիքը և կը գործածուի մկրտութեան, հաստատման/միւռոնօծման, հիւանդներու օծման և ձեռնադրութեան:

Ա Կ Ե Ր

Իւղը կը ծորէ Միրնայէն աղօթքի ատեն, կամ երբ կը խօսակցի երեւոյթին մասին, կամ սքանչանքի ատեն:

Իւղը կը ծորէ Միրնայէն, ձեռքերէն, դէմքէն, վիպէն, աչքերէն, Ստամոքսէն (ԿԱՏԱՐԵԱԼ ԾՈՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻՒ ԵՐՐՈՐԴ ՕՐԸ, ՆՈՅԵՄԲԵՐ 26 ԷՆ 29 1984), ոտքերէն (մէկ անգամ):

Իւղը կը ծորէ ձեռքերէն անձերու որոնք օտար են ընտանիքին և Սուրիոյ, բայց միշտ յարաբերութեան մէջ են Notre-Dame de Souffanieh-ի երեւոյթին հետ.:

Երբ որ կապոյտ սրբանկարը (1) կը փոխադրուի յաղթական ձեւով Յոյն-օրթոտոքս Բիւզանդական եկեղեցւոյ մէջ (տունէն 500 մէթր հեռու), Կիրակի Յունուար 9 1983-ին, կը դադրի ծորելէ և կը շարունակուի մանիշակագոյն սրբանկարով (1) Յունուար 17 1983-էն սկսեալ: Իւղը կը ծորէ հավարէ աւելի վերարտադրուած սրբանկարներէ: Կը ծորէ Սուրբ Կոյսին իւղանկարէն, աղօթագիրքէ մը, կապոյտ սրբա-նկարին կղպանքի տակ դրուած պատին ետեւէն, երկու պահարաններուն ապակիներէն (տան մուտքինը և դուրսի բակինը), հիւանդներու դրուելիք տուբին մէջի բամպակէն, Միրնայի կրած մէտալիոնէ մը, եւայլն...

(1) Տարբերութիւնը Սուրբ Կոյսին հագուած զգեստներէն կախեալ է:

ՎԱՅՐԵՐ

ԻՒՂԸ ԾՈՐԱՑ ՄԻՈՆԱՅԷՆ, ԻՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՈՒՆ ԱՏԵՆԸ, ՀԵՏԵՒԵԱԼ ՔԱՂԱՔՆԵՐՈՒ ԵՒ ՎԱՅՐԵՐՈՒ ՄԷՋ (ՑԱՆԿԸ ԱՆԿԱՏԱՐ Է)

ՍՈՒՐԻԱ (ԶԱՆԱԶԱՆՔ)
ԴԱՄԱՍԿՈՍ, ՀՈՄՍ, ՀԱՍՍԱՔԷ, ԽԱՊԱՊ, ՊԱՍԻՐ, ՔՐԱՅԱ, ԼԱԹԱՔԻԷՀ, ՀԱԼԷՊ, ՍԱՖԻԹԱ, ՄԱՐՄԱՐԻԹԱ

ԼԻԲԱՆԱՆ (ԶԱՆԱԶԱՆՔ)
ՊԷՅՐՈՒԹ, ԶԱՀԼԷ, ԺՈՒՐԷԹ ԷԼ ՊԱԼԼՈՒԹ, ՄԱԱՏ, ՀԱՐԻՍԱ, ՖԷՅԹՐՈՒՆ, ԺՊԷՅԼ, ՊԻՊԼՈՍ, ԺԱՊՊՈՒԼԷ, ԱՅՆ-ԷԼՊ, ԹԻՐ, ՄԱԿՏՈՒՍԷ, ՄԱՆՍՈՒՐԻԷՀ, ՄԻԷ-ՄԻԷ, ՀԱՐԷԹ-ՍԱԽՐ

ՅՈՐԴԱՆԱՆ
ԱՄՄԱՆ, ՄԱԱՏԱՊԱ

ԿԻՊՐՈՍ
ԼԱՐՆԱՔԱ

ԱՄԷՐԻԿԱՅԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ (1988, 1989, 1995, 1996, 1997)
ԼՈՍ ԱՆՃԷԼԷՍ, ՍԱՆ ԺՈԶԷ, ՄՈՏԷՍԹՕ, ՍԱՆ ՏԻԷԳՕ, ՊԷՅՔԸՐԶ ՖԻԼՏ, ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՕ, ՍԱՆ ՐԱՖԱԷԼ, ՍԱՆ ՊՐԻՒՆՕ, ՏԻԹՐՈՅԹ, ՆԻՒ ԵՕՐՔ,, ՆԻՒ ՃԸՐԶԻ, ՔԼԷՎԸԼԱՆՏ, ԵԱՆԿՍ-ԹԱՈՒՆ, ԱՔՐՕՆ, ՍԹՈՔԹԸՆ, ՊՈՍԹԸՆ

ՔԱՆԱՏԱ (1993,1996, 1997)
ՄՈՆՐԷԱԼ, ՔԷՊԷՔ, ՕԹԱՎԱ

ԳԵՐՄԱՆԻԱ (1990,1991,1998)
ՄԻՒՆՍՏԷՐ, ՇԼԱՆԿԷՆ, ՏԻՍԷՆ, ԱԼԹԷՆՊԷՐԿ

ՖՐԱՆՍԱ (1991, 1993, 1996, 1997)
ՊԸԶԱՆՍՈՆ, ԱՐՍ, ՓԱՐԻԶ, ՎԻԼԼԻԷ-ՍԻՒՐ-ՔՈՒՏՕՆ, ԱՊՊԷՅԻ ՏԸ ՊՈՆՆԸՎԱԼ, (ԷՍԲԱ-ԼԻՕՆ), ՏԻԺՕՆ, ԼԱ ՖԷՐԹԷ ԿՈՇԷ, ՎՈՄՈՒԱԶ

ՀՈԼԼԱՆՏԱ (1991,1998, 1999)
ՄԱԱՍԹՐԻՔԹ

ԱՒՍՏՐԱԼԵԱ (1993)
ՄԷԼՊՈՒՐՆ, ՍԻՏՆԷՅ, ՊՐԻՍՊԱՆ, ՆԻՒ ՍԱՈՒԹ ՈՒԷԼԸՍ, ԱՏԷԼԱՅԻՏ

ՊԷԼՃԻԳԱ (1995)
ՊՐԱԱՇԱԹ

ԵԳԻՊՏՈՍ (1990,1991,1992,1993,1995,1996,1997)
ԳԱՀԻՐԷ

ԻՒՂԸ ԾՈՐԱԾ Է ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԱԾ ՍՐԲԱՆԿԱՐՆԵՐԷՆ

(ԱՆԿԱՏԱՐ ՅԱՆԿ)

Սուրիայէն, Լիբանանէն, Յորդանանէն, Իրաքէն, Պէյթ Սահուրէն (Պաղեստին) , Վէնէզուէլայէն, Զվիցերիայէն Ամէրիկայի Միացեալ Նահանգներէն, Քանատայէն, Գաղղիայէն, Հոլանտայէն, Գերմանիայէն, Պէլճիգայէն, Աւստրալիայէն, Հայիթիէն և այլ արաբական երկիրներէ:

ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ

-Միրնայի և ուրիշ անձերու աղօթած ատենը
(առաջ կամ վերջը),
-Միրնայի սքանչանքներու ատենը,
-Սուրբ Կոյսի մասին խօսակցութեան մը ատեն:

Սրբանկարէն կամ անոր նկարչային վերարտադրութիւններէն, աղօթքէ դուրս, քրիստոնեայ և երբեմն մահմետական տուներէ:

ՇՆՈՐՀՆԵՐ

Քանի մը ոսկրային կամ տարբեր հիւանդութիւններո բուժում, յղութիւն մը բաւական չափով ուռերու ներկայութեան, ուրիշ պարագայ մը քանսէրի ներկայութեան, վկայուած են բժիշկ-ներու կողմէ (որոնցմէ Բժիշկ Բիէր Սալամ և Բժիշկ Ժամիլ Մարժի):

Իւղին ազդեցութեան ի պատասխան, հոգեկան վգացում մը կ՛աւելնայ աղօթքին: Խաղաղ մթնոլորտի մը մէջ կ՛աղօթեն Սուֆֆանիէյի Սուրբ Կոյսին տան մէջ և նաև այն տուներուն մէջ ուր իւղը երեւցաւ, երբ ընտանիքները կ՛աղօթեն միասին:

Գալով հոգեկան բուժումներուն, ամէն օր կը տեսնենք անոնց արդիւնքը և անոնք հիանալի են:

ԻԻՂԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Այս վոյգ իւղի ակերը վեց գիտական քննութիւններու ենթարկուած են (սրբանկարինը և Միրնայի մարմինինը). երկուքը Սուրիա, երկուքը Գերմանիա ,մէկը Բարիզ (Գաղղիա), մէկը Հռոմ (Իտալիա): Արդիւնքները նոյնն են.

ՋՈՒՏ, 100 ԱՌ 100 ՁԻԹԱԻԻՂ Է:

Սպիացման երեւոյթը կը տեսնուի սպիացած անձին վրայ երբ անոր մարմնին վրայ կը տեսնուին նշաններ Յիսուսի հինգ վէրքերը և փշէպսակը. Վէրքերը չեն թարախոտիր և արիւնը անապակ է: Սպիացումը կը կատարուի մարմնային և հոգեկան տառապանքներով: Ան ընդհանրապէս կը պատահի Յիսուսի Խաչելութեան յիշատակման օրը:

Առաջին սպիները երեւցան հետեւեալ ձեւով.

-կարծրութեան նման բան մը կ՛երեւի ամէն մէկ ձեռքի ափին մէջ, ձախ կողի վէրքը կը բացուի հինգ վէրքերուն միւնոյն ատեն բացուած օրէն մի քանի օր առաջ, ևայլն... Կը բացուին Ուրբաթ Նոյեմբեր 25 1983ին կէսօրէ ետք, և բոլորովին կը սպիանան գիշերուայ ժամը 11ի մօտ առանց հետք ձգելու: Անոր չափը 1.5 սանթիմ (.75 բթաչափ) էր: Ութը բժիշկներ վանոնք տեսած են, և մի քանիներ վանոնք շօշափած են:

Երկրորդ սպիները բացուեցան յանկարծակի Աւագ Հինգշաբթի Ապրիլ 19 1983ին կէսօրէ ետք ժամը 330: Կողին վէրքը խորունկ էր: Հայր Մալուլին վայն չափեց, 1 Անոր չափը 10 սանթիմ (4 բթաչափ) էր: Ներկաներէն մէկը խորհուրդ տուաւ Նիքոլային որ իր կինը հիւանդանոց տանի որպէսզի կողին վէրքը կարեն: Պատասխանը եղաւ յստակ և վերջնական. ***"Ան որ վէրքերը բացաւ կանոնք կը գոցէ":*** Ժամը գիշերուայ 11ի մօտ բոլոր վէրքերը գոցուած էին առանց հետք ձգելու:

Երրորդ սպիները բացուեցան Աւագ Հինգշաբթի Ապրիլ 16 1987ին, Հայրեր՝ Էլիաս Զահլաուիի և Ժոզէֆ Մալուլիի ներկայութեան որոնք տեսան առաջին արեան կաթիլներուն ցայտումը Միրնայի ճակատէն ուր առաջին անգամ ըլլալով վէրք մը բացուած էր: Կողի վէրքին չափն էր 12 սանթիմ (4.75 բթաչափ): Գաղղիացի կենսաբա-նութեան մասնագէտ, Տիկին Ժընըվիէվ Անդաքլի վայն չափեց, և վայն կոչեց ճանկրտուք մը: Այդ վերքը բացուեցաւ միւսներէն 10 վայրկեան յետոյ և յաջորդ օրը ***բոլորովին*** գոցուած էր. Երկու ներկայ վիրաբոյժերը անոր չէին դպչած: Միւս վէրքերը որոնք քննութեան ենթարկուեցան շատ մը օրեր յետոյ սպիացան: Ճակտին, ձեռ-քերուն և ոտքերուն վէրքերը սպիացան առանձ դարմանումի: Ոչ մէկ հականեխական դեղ գործածուեցաւ սպիներուն վէրքերը դարմանելու համար:

Գերապատիւ Տէր. Ստէֆանոս Հատտատ, Արքե-պիսկոպոսը, Յոյն-Օրթոտոքս ծէսէն, տեսաւ առաջին սպիները: Մէկ ժամի մօտ կեցաւ Միրնայի մօտ: Սիրեաք-Կաթողիկէ ծէսէն Գերապատիւ Տէր Ժոզէֆ Մունայէր ստուգեց երկրորդ սպիներուն ներկայութիւնը:

Հայր Նիքոլա Պաալպաքի, վիրաբոյժ և քահանայ Յոյն-Օրթոտոքս ծէսէն տեսաւ և շօշափեց երրորդ սպիները: Երրորդ սպիներուն բացուելէն յետոյ, ներկայ էին երկու կենսաբանութեան մասնագէտներ, Տիկին Ժընըվիէվ Անդաքլի և իր ամուսինը Ժան-Քլոտ Անդաքլի, և Լուի Քաուա և Ժորժ Մէմար վիրաբոյժերը:

Բացառաբար, Ուրբաթ 25 Նոյեմբեր 1983ի (առաջին տարեդարձ) կ՚անդրադառնանք թէ այդ տեղի կ՚ունենար միայն այն տարիներուն ուր կաթողիկէները և օրդոտոքսները **միասին կը տօնեն Սուրբ Զատկուան տօնները:** Միւս տարիներուն բան մը չի պատահիր, ոչ իսկ փոքր կաթիլ մը իւղ, չի ծորեր ոչ կաթողիկէներու Զատկին ոչ որթոտոքս Զատկին առթիւ:

1990 Աւագ Հինգշաբթի օրը սպիները բացուեցան երեք հանգրուանով.
.ժամը 11.14 ին, ճակտին հինգ վէրքերը բացուեցան
.ժամը 13.26 ին, ձեռքերուն և ոտքերուն վէրքերը
.ժամը 13.31 ին, բացուեցաւ կողին վէրքը որուն չափը 12 սանթիմ (4.76 բթաչափ) էր:

Հաղորդակցութեան/Տեղեկութեան համար դիմել

Association Notre-Dame-de-Soufanieh à Montréal
955 - 40 ème Avenue
Lachine, P.Q.
CANADA H8T 2G7
Tél.: (514) 634 0371 - Fax (514) 639 1587
INTERNET: http://www.soufanieh.com (site)
soufanieh@sympatico.ca (courier)

Ձ Ր Ի:

Շնորհաւոր Սուրբ Զատիկ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԶԱՏԻԿ

Շնորհաւոր Սուրբ Ծնունդ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Հաղորդակցեցէք մէկի հետ

ՀԱՂՈՐԴԱԿՑԵՑԷՔ ՄԵԶԻ ՀԵՏ

Լուրեր

ԼՈՒՐԵՐ